

ՍԵՐԻԿ ԳԱՎԹՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻ ՀԻՆ ՆՄՈՒՇ

Ասեղնագործությունը ժողովրդական ստեղծագործության հին և հարուստ բնագավառներից մեկն է, Այն ծագել է նախնադարյան հասարակության ծոցում, երբ մարդիկ սկսել են օգտագործել ասեղի նախնական տեսակները և ապա ասեղը: Առօրյա աշխատանքների ընթացքում մարդիկ աստիճանաբար սովորել են նաև այդ գործիքների օգնությամբ կատարել զարգեր՝ հիմք դնելով ասեղնագործության արվեստին:

Պեղումների շնորհիվ հայտնաբերված զարգարուն և ասեղնագործ հագուստները և ուրիշ իրերը ցույց են տալիս, որ ասեղնագործությունը հին աշխարհի սիրած զբաղմունքներից մեկն է եղել:

Ասեղնագործության մասին մեծարժեք վկայություններ են պահպանվել նաև հին ժողովուրդների էպոսներում և առհասարակ բանահյուսական հուշարձաններում: Համերոսի «Իլիականում» և «Ոդիսականում» այդպիսի բաղմամբով տվյալներ կան: Հիշենք Հեղինեին, որ Տրոյայում նստած ասեղնագործում էր իր պատճառով ծագած պատերազմի որոշ տեսարանները:

Շատ հին ժամանակներից սկսած ասեղնագործությունը եղել է նաև հայ ժողովրդի և հատկապես հայ կնոջ սիրած զբաղմունքներից մեկը: Հայ առաջին պատմիչների երկերում պահպանված են վկայություններ հայկական զարգացած ասեղնագործության մասին: Միջին դարերից պահպանվել և մեղ են հասել ոչ միայն այդպիսի հիշատակություններ<sup>1</sup>, այլև ասեղնագործության որոշ նմուշներ: Պիտի նկատել սակայն, որ մինչև օրս ի միշին հավաքված և չեն ուսումնասիրված հայկական ասեղնագործության մա-

<sup>1</sup> Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» մեջ հանդիպում ենք, օրինակ, հետևյալ ուշագրավ վկայությունը:

«Յայտ մի եղև աւարտ հոշակաւոր և խնդառես եկեղեցւոյն Գեակայ, զոր շինեաց վարդապետն Մխիթար իւր միարանօքն՝ ձեռնառուլեամբ վաղթանկայ Խաչնեցւոյ՝ տեսան Հաթերբոյ, և եզրաբց իւրոց՝ Գրիգորոյ և Գրիգորիսի և Խոյզանայ և Վասակայ, և այլոց իշխանաց բարեպաշտաց՝ որդոց Քրթին Գալթի և Սաղունին. նա և քոյր նոցա Արզու խաթուն, կին Վաղթանկայ Հաթերբեցւոյ, սա բազում ինչ օժանդակ եղև. արար և վարդաքոյր գեղեցիկ՝ դստերօք իւրոյք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մազոյ այծից կակղաղունաց, ներկեալ պէս պէս և զանազան, զործ քանդակակերպ և նկարեալ պատկերօք, ճշգրտադոյն հանուածոյք. անօրինականօք փրկչին և այլոց սրբոց, որ հիացուցանէր զտեսողսն: Եւ որք տեսանէին, օրհնութիւն տային Աստուծոյ, որ ետ կանանց իմաստութիւն փոսայանկութեան և հանձար նկարակերտութեան, որպէս առ Յորն ասացաւ, որ ոչինչ ընդհատ էր ի կազմուածոյ խորանին՝ զոր արարին Բեակիէլ և Ելիար, թէ ոչ յանդգնութիւն է ասելս, զի նոյն հողի էր՝ որ շարժէր զնոսա և զոսնա: Եւ ոչ այս եկեղեցւոյ (միայն) արար ծածկոյթ, այլ և այլոց եկեղեցեաց, Հաղրատայ և Մակարայ վանից և Գաաի վանաց. բանդի յոյժ սիրող էր եկեղեցեաց բարեպաշտ կինն» (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, 1909, էջ 203—204):



սին եղած հարուստ ու մեծարժեք այդ գանձերը<sup>1</sup>։ Դրա անհրաժեշտությունը մեծ է թե՛ հարցի պատմագիտական առումով և թե՛ աշխարհա ծաղիկոց ասեղնագործության զարգացմանը նպաստելու նպատակով։

Ներկա հոգվածով ընթերցող հասարակության և մասնագետների ուշադրությանն ենք ներկայացնում հայկական միջնադարյան ասեղնագործության միայն մի նմուշ, որը սխալմամբ է Հայկական ՄՍՌ Պետական Մատենագարանի № 3611 ձեռագրում, որպես կազմի պարագա։ Այդ ձեռագիրն ընդօրինակված է 1267 թվականին և կազմված է, եթե ոչ նույն թվականին, ապա նույն 13-րդ դարում։ Ուստի և մեզ հետաքրքրող ասեղնագործությունն էլ պատկանում է այդ նույն ժամանակներին և ներկայանում որպես հայկական ասեղնագործությունից սխալմամբ հին նմուշներից մեկը։

Քանի որ նման զարգարուն կտորները հաճախ ունենում են լսկ անկվածագործական ծագում, ներկայանալով ուղղակի որպես գործվածք, ուստի հարկ կա նախապես ճշակել մեզ հետաքրքրող նմուշի բեկորների ասեղնագործության բնագավառին պատկանելը։

Որ այդ բեկորների վրա տրված զարդերն իրոք ասեղնագործություն են, ապացուցվում են հետևյալ փաստերով.

1) Այդ նմուշների վրա կան զարդաթելի հանդույցներ, կազմի առաջին աստառի վրա կա երեք հանգույց, իսկ երկրորդ փեղկի աստառի վրա՝ մեկ, որոնք արված են ձեռքով և հատուկ են ասեղնագործությանը, ինչպես մինչև օրս էլ արվում է ձեռքի կարի ժամանակ։

2) Զարդի յուրաքանչյուր միավոր քաղկացած է մի սոսրածե շրջանակից և նրա մեջ ամփոփված մի ծառից, ըստ որում սոսրի միջի ծառն ասեղնագործված է առանձին, իսկ սոսրի կողերը առանձին-առանձին, ծառի ու շրջանակ-սոսրի մեջ մնում է բաց տարածություն։ Եթե դա անկվածագործություն լիներ, ապա թելերը (կարմիր մետաքս) պետք է անցնեին կտորի ամբողջ լայնությամբ, առանց ընդհատվելու, միշտ պետք է թելը անցներ կամ տակից, կամ երեսից, ինչպես մինչև օրս էլ այդ արվում է հայկական տնայնագործ ջուլճակների մոտ, կամ ինչպես պատրաստվում են գործարանային կտորները, հենց շինական բազմազարդ, բարդ զարդերով մետաքսյա կտորները։ Մինչ մեր նմուշում թելն ընդհատվում է, որովհետև ծառն առանձին է ասեղնագործվում, իսկ շրջանակը առանձին և նրանց միջի տարածությունը — սպիտակ կտորը — բաց դաշտի գեր է կատարում։

3) Կարմիր մետաքսյա թելը գործվածքի հենքի մեջ չի մտած, ինչպես դա լինում է անկվածագործության ժամանակ, այլ անցնում, զարգարում է կտորը այնպես, ինչպես ասեղնագործության մեջ է լինում։ Երբեմն այդ թելը ծուռ է անցնում, կարը զծից դուրս է գալիս, այդպես կարող է լինել միայն ձեռքի կարի ժամանակ և ոչ մի գեպրում՝ անկվածագործության մեջ։

4) Ըյուղերի ծայրերին, երբ հարկավոր է կետերը վերջացնել, թելը թեք է անցնում ճյուղից մինչև կետի կտուցը — ծայրը, թելի այդպիսի անցումները մի գծից մյուսները, գեպից ցած, կամ գեպի վեր, կարող են գոյանալ միմիայն ասեղով աշխատելիս։ Դա շատ պարզ երևում է կազմի երկ-

<sup>1</sup> Այդ ուղղությամբ որոշ գործ է կատարել Գ. Հովսեփյանը։



բորդ փեղկի աստառի վրա, ուր ասեղնագործված կտորը փակցված է տախտակին երեսի կողմից: Անկվածագործության մեջ նման անցումները կատարվում են ուղիղ գծով, հինված թելերի միջով:

5) Շրջանակ-սոմբի կողմերի վրայի կետերի թիվը տարրեր կողմերի և տարրեր սոմբերի մեջ տարրեր է: Նման շեղումներ կարող են հանդիպել ասեղով աշխատելիս:

6) Այն կետերը, որ պետք է մի գծի, մի շարքի վրա լինելին, երբեմն մեկ-երկու թելով իրենց շարքից կամ բարձր են կամ ցածր, սրը նույնպես ստացվում է ասեղով աշխատելու ժամանակ:

7) Ջարդամոտիվները չնայած ամեն տեղ նույնն են, բայց բոլորի մեջ էլ խախտումներ կան, մի տեղ ծառի գագաթին է կպած շրջանակին, մյուս տեղում՝ սրեւ ճյուղ և այլն, այդպիսի սխալներ կարող էին լինել ձեռքով ասեղնագործելիս, մանավանդ, որ մեր նմուշը աշխատելիս պահանջում է միշտ հաշվել թելերը, իսկ կտորի թելերը բարակ են, նուրբ և խախտումները անխուսափելի են:

Այս և մի շարք այլ փաստեր, որոնց թվարկումն արդեն ավելորդ է, անվիճելիորեն ցույց են տալիս, որ մենք այստեղ գործ ունենք ասեղնագործության հետ:

Նշված ձեռագիրը գրված է թղթի վրա, կարված բամբակի հաստ թելով: Կազմած ձեռագրի կողից երևում են քուղ և տափակ ժապավեն, որից կարված են ձեռագրի թերթերը: Քուղը սլորված է, իսկ ժապավենը հյուսված կարմիր, սպիտակ և շագակահանագույն թելերով:

Ձեռագիրն ունի կաշեպատ կազմ: Ամբության և երկար պահպանելու համար կազմի ասի երկու կողմից դրված են բարակ տախտակի կտորներ: Տախտակի ու կաշվի արանքում դրված է հաստ կտավ (սյարկի կտոր), իսկ կազմի ներսի կողմից, ձեռագիրն ու կազմը միացնելու համար, կպցրած են երկու ասեղնագործ կիսամաշ կտորներ, որոնց և նվիրված է մեր հոգվածը:

Ձեռագիրն ունի նաև մազադաթյա երկու պահպանակ: Կազմի գրոշմազարդ, մուգ շագանակագույն կաշին ձածկելով կազմը, վրա է գալիս գեպի ներս և ձածկում ասեղնագործ աստառի եզրերը: Կաշին կազմի ներսի կողմից ամրացված է տախտակին փայտե փոքրիկ մեխերով:

Կազմի երկարությունն է 169 մմ, լայնությունը՝ 109 մմ, հաստությունը՝ 65 մմ:

Ձեռագրի մի էջից (249) մի փոքր կտոր պոկված է և նույն հաստ թելով կարված իր տեղում:

Ասեղնագործ կտորներն այստեղ գործ են անված կազմարարության մեջ ընդունված լաթի, կտորի տեղ: Այդ կտորները թափանցիկ, բարակ կտորներ են, որոնց վրա ասեղնագործված դարգանկարները նման են ճյուղավորված «ծառ»-երի՝ զետեղված ասեղնագործ սոմբերի մեջ:


«Ծառի» բարձրությունն է 83 մմ, իսկ լայնությունը՝ 80 մմ: Ասեղնագործ սոմբերը դասավորված են կտորի վրա՝ մեղրամոմի բջիջների կարգով, նրանց միջի բոլոր «ծառերն» ունեն միևնույն ուղղությունը:

Կտորների վրա ասեղնագործ դարգարանքները հետևյալ կերպ են երեւում՝ կազմի առաջին փեղկի աստառի վրա երևում են ասեղնագործ չորս դարգանկարների մասերը միայն:



Կազմի առաջին փեղկի աստառի տակ, աջից առաջին սոմբի մեջ, երևում է զարդանկարի կիսից մեկ ան ավելի: Այդ սոմբից ցած, գեպի ձախ երևում է երկրորդ սոմբի  $\frac{3}{4}$ -ը ( $\frac{1}{4}$ -ը գտնվում է կազմի կաշվի տակ): Գրանից փերե գտնվում է երրորդ սոմբի  $\frac{3}{4}$ -ը ( $\frac{1}{4}$ -ը կաշվի տակն է գրանրվում): Գեպի ձախ, երկրորդ և երրորդ սոմբերի կողքից երևում է չորրորդ սոմբի  $\frac{1}{3}$ -ը ( $\frac{2}{3}$ -ը գտնվում է կաշվի տակ):

Այսպիսով այդ աստառի վրա չկա և ոչ մի ամբողջական «ծառ» իր շրջանակ-սոմբով: Կազմի երկրորդ փեղկի աստառի վրա սեղգակի կենտրոնում գտնվում է ամբողջ զարդանկարը, սակայն այդ սեղնագործ կտորը փակցված է կազմին երեսի կողմից և զիտողին երևում է միայն աստառը:



Նկ. 1.

Սեղնագործված կտորը փակցված է տախտակին խմորով կամ սոսինձով, որի թանձր շերտը, ծածկելով կտորն ու թելերը, ազատազել է զարդանկարի գծերը: Այդ խմորը կամ սոսինձը ամեն տեղ միատեղ է սեղ-




նագործութեան պահպանմանը: ժամանակի ընթացքում ասեղնագործութեան մեծաքսյա թելերը մաշվել ու թափվել են:

Այդ հանգամանքները շատ էին դժվարացնում զարդաձևերի վերարտադրութեանը, ասեղնագործութեան կարի, թելերի ճիշտ հաշվառումը և կատարման տեխնիկայի ուսումնասիրութեանը:

Զարդանկարը վերարտադրելու համար անհրաժեշտ էր այն և նկարել և ասեղնագործել — ասեղով նկարել, որպեսզի կարի տեխնիկան ճշտորեն վերարտադրվեր: Մեծ դժվարութեան էին հարուցում նաև կարերն իրենց մանրութեամբ, ձևափոխված ու մաշված լինելով: Միայն երկարատև ուսումնասիրութեանից հետո, խոշորացույցի օգնութեամբ, հաջողվեց ստանալ զարդանկարի մեկ միավորի՝ ծառի ու նրա ստոր-շրջանակի ասեղնագործ պատճենը (նկ. 1):

Ռոմբի ներքևի անկյունի նախշից բարձրանում է ծառի բունը, որի երկու կողմից սիմետրիկ կերպով դասավորված են յոթ դույզ ճյուղերը (մի դեպքում 6 դույզ ճյուղեր են): Ծառի գագաթի ճյուղն իրենից ներկայացնում է մի փոքրիկ սոմբ: Ինքը՝ ծառի բունն էլ ակոտեղ վեր է ամված սոմբերի: Ծյուղերն ունեն յուրահատուկ ակոթ և ավարտվում են դեպի ներքև ուղղված տարրեր ձևի կեռերով: Բոլոր դեպքերումն էլ սիմետրիկ կառուցվածքը պահպանված է: Ծյուղերից 1-ինը և 3-րդը իրենց ձևերով նման են միմյանց (նկ. 2), 2-րդը մի դեպքում վերջանում է կեռի ծայրը դեպի ներս, մյուս դեպքում — դեպի դուրս (նկ. 3): 4-րդը կրկնակի ձև ունի (նկ. 4): 5, 6, 7-րդ ճյուղերը միմյանց նման են ձևով, սակայն միմյանցից տարրերվում են երկարութեամբ, 5-րդն ավելի երկար է, 6-րդը՝ նրանից կարճ, իսկ 7-րդը ավելի կարճ: Կազմի աստատի ծառերից մեկն ունի 2 դույզ վերին ճյուղեր:



նկ. 2.

Ծյուղերից յուրաքանչյուրը կազմված է երկու զուգահեռ զարդագծերից: Ծառի պատկերն ընդգրկող սոմբաձև շրջանակի չորս կողմերից յուրաքանչյուրը զարդարված է երկու շարք կեռերով, որոնք հիշեցնում են թռչունների կտուցներ և դասավորված են միմյանց հանդեպ հակառակ ուղղութեամբ, այդ կեռերի թիվը տարրեր սոմբերի մեջ տարրեր է (10—18 դույզ): Մի զարդանկարի վերարտադրման ժամանակ մենք ամեն մի կողմից ընդունել ենք 14 դույզ կեռեր: Ի դեպ պետք է ասել, որ այդ կեռերը (նման են թռչունի կտուցի) շատ սիրված զարդանկար են ոչ միայն հայկական ժողովրդական կապերաագործութեան մեջ (կապերա, գորգ, խուրճին և այլն), այլև արևելյան շատ ժողովուրդների համապատասխան բնագավառներում:

Շրջանակի կողմերը գեղեցիկ կերպով միանում են սոմբի անկյունների զարդաձևերի հետ: Հետաքրքիր են անկյունների այդ զարդաձևերը, որոնք վերջանում են դեպի ցած ուղղված մեկական սուր գագաթով, հենց այդ սուր գագաթների ներսից էլ սկսվում է ծառի բունը: Այդտեղ ծառի





Նկ. 3.

Տիւֆի երկու կողմում, կտուցները դեպի ծառի բունը, նստած են երկու թռչուն: Ասեղնագործության տեխնիկայի, թե հնամյա արագիցիայի շնորհիվ՝ այդ թռչունների մարմինները միացել են խաչաձև:



Նկ. 4.

Ասեղնագործությունը կատարված է ճերմակ թափանցիկ կտորի վրա. դա թափանցիկ կտավ է, որի թելերը հնարավոր է հաշվել:

Ասեղնագործությունը միազույն է, կարված միայն կարմիր (մոշի գույն) սլորած մետաքսյա թելով: Ենթադրում ենք, որ նման բարակ կտորի վրա տվյալ տեխնիկայով ասեղնագործությունը կատարվել է քարգյահի մեջ:

Ասեղնագործությունը արված է ուղիղ կարով, գծային, բոլոր կարերը միմյանց հանդեպ հորիզոնական են, ուղիղ, ոչ մի անդ կոր գիծ չի գոյանում: Կարերը դասավորված են որոշ խմբերով, մի գծի վրա, այդ գծերը ասեղնագործվում են գուգահեռ կերպով, մեկ մտանալով, մեկ հեռանալով ծառի բնից, ինչպիսի ձևով և լրացվում, ասեղնագործվում են զարդաձևերը:

Ծառն ասեղնագործված է առանձին, իսկ սոմբ-շրջանակը՝ առանձին: Ասեղնագործությունը կատարված է ամենահին ու տարածված «ասեղն առաջ» շուլայով, կամ ավելի ճիշտ՝ «շարակարով», խիստ զգուշությամբ հաշվելով կտորի թելերը, թե նրանց ծածկելու, թե բաց թողնելու համար:

Ասեղնագործությունը այնպես է կատարված, որ աստառի կողմից ստացվում է իսկապես երեսին արված զարդարանքի նեղատիվ ձևը:

Այնպեղ, ուր կտորի վրայով անցնում է կարմիր մետաքսյա թելը, կտորը տակից մնում է դատարկ և ընդհակառակը — եթե երեսի կողմից մնում է բաց տարածութուն (թելով չծածկված կտոր), ապա դրա տակով անցնում է մետաքսյա թելը:

Ասեղը մեկ իջնում է կտորի տակ, մեկ բարձրանում, անցնում է կտորի երեսով: Կարերը միմյանց հետևից շարվում են ասեղի վրա ուղիղ շարքերով, այդ պատճառով էլ նպատակահարմար է այս ասեղնագործությունը և կարի տեխնիկան անվանել շարակար:



Թվում է, որ կարի այս ննադույն ձևը այն կարն է, որի մասին Վ. Վ. Ստասովն ասել է.

«...Далее следует самое скорое шитьё набором... Шитьё это состоит в том, что нитка постоянно ныряет вверх и вниз, как при тканье, так что один стежок приходится на лицо, а другой на изнанке холста. Другие названия этого шитья: „бранью“, по бранному, *выкладкой*, шьется красной бумагой, иногда и синими нитками»<sup>1</sup>.

Սակայն կա տարբերություն հայկական ասեղնագործության քննվող նմուշի և սուսական ժողովրդական «набор» ձևի ասեղնագործության մեջ:

Ռուսական նշված ասեղնագործությունը կատարվել է հաստ կտավի վրա, որի թելերը ամուր են, հաստ, հեշտ են հաշվվում, բացի դրանից, այդտեղ օգտագործված է բամբակի կամ վուշի թել: Մեր ուսումնասիրած ասեղնագործությունը արված է բարակ, թավանցիկ կտորի վրա, որի թելերը գծվար է հաշվել, իսկ զարդակարը կատարված է մետաքսյա թելով, որը բարդացնում, երկարացնում է աշխատանքը: Դա միաժամանակ խոսում է նաև վերջինիս նրբության մասին:

Մյուս տարբերությունն այն է, որ մեր նմուշի մեջ ծառը կարվում է առանձին, իսկ շրջանակ-սոմբը առանձին, որպիսի հանգամանքը, առանձին թելերը հաշվելիս, լրացուցիչ գծվարություն է առաջ բերում, մինչդեռ սուսական ասեղնագործության մեջ ամբողջ շարքը արվում է առանց ընդհատումների:

Գ. Ս. Մասլովան գտնում է, որ ուկրաինական «НИЗЬ» կարը նման է սուսական «набор»-ին<sup>2</sup>:

Հետևապես մեր շարակարը ունի որոշ նմանություններ սուսական «набор» և ուկրաինական «НИЗЬ» կարերին:

Մեր նմուշի մեջ մեծ տեղ է գրավում 1, 3 թելերի հաշվով, երբևմն 2, 4-ը կամ 4, 5, 6, 7-ը, եթե այդ պահանջվում է երկրաչափական որևէ զարդի ձևավորման համար:

Անկյունի զարդանկարը ասեղնագործվում է հետևյալ կերպ՝ կողքի ուղղահայաց շերտերը ասեղնագործվում են ինը թելի վրա, մի գծով: Երեք թել ծածկվում է մետաքսյա թելով, մի թել բաց է թողնվում, մի թել ծածկվում, մի թել նորից բաց թողնվում և էլի երեք թել ծածկվում:

Հետևյալ շարքում՝ երկու թել ծածկվում է մետաքսյա թելով, մի թել բաց թողնվում, երեք թել ծածկվում, մի թել բաց թողնվում, երկու թել ծածկվում և այդպես, միմյանց հաջորդելով ասեղնագործվում են շարքերը հետևյալ սխեմայով.

3—<sup>1</sup>—1—<sup>1</sup>—3

2—<sup>1</sup>—3—<sup>1</sup>—2

3—<sup>1</sup>—1—<sup>1</sup>—3

2—<sup>1</sup>—3—<sup>1</sup>—2

Թավ թվանշանները ցույց են տալիս, թե կտորից քանի թել է ծածկվել մետաքսյա թելով:

<sup>1</sup> Стасов В. В., Русский народный орнамент, т. I, изд. 1894 г., С. Петербург, стр. 190.

<sup>2</sup> Г. С. Маслова, Историко-культурные связи русских и украинцев по данным народной одежды. «Советская этнография», № 2, 1954.



Ռոմբի ներքևի անկյունի զարդանկարը ասեղնագործվում է ամբողջ լայնությամբ՝ աջից-ձախ, ապա ձախից-աջ, գործելիս միանգամից ստացվում են զարդանկարի կողքի ուղղահայաց շերտերը, թռչունները, ծառի բունը, եռանկյունիները: Այդ զարդանկարի ներքևի ծայրից սկսվում է, ինչպես ստացինք, ծառի բունը: Նախ երեք թելի վրա, ապա հինգ և այդպես միշտ (երեք-հինգ) մինչև բնի երկրաչափական ձևերի ու ծառի ճյուղերի սկսվելը:

Ծառի բունը, «աճելով» անկյունի այդ զարդանկարից, ասեղնագործվում է ծառի ճյուղերի հետ միասին մինչև ծառի դագաթը:

Ծառն իր ճյուղերով ասեղնագործվում է դուզահետ գծերով, նախշի ամբողջ լայնությամբ, մի ճյուղի ծայրից մինչև նրա դիմացի ճյուղի ծայրը, ձախից աջ և ապա հետ դալիս աջից ձախ, էլի ձախից աջ և այլն:

Ամբողջը կարվում է մեկ գծով, միայն ճյուղերի վերջին կետ ծայրերը ասեղնագործվում են տանձին-առանձին, ամեն մեկը իր հերթին: Ըյուղերը գործելիս պահպանվում է 1—3 թելերի հաշիվը: Օրինակ, ամենաներքևի ճյուղը (նկ. 2) կազմված է չորս շարք երեքական թելերից, սրոնք վեր են բարձրանում թեք ուղղությամբ:

Մետաքսով ծածկված ամեն երեք թելից հետո արանքում մնում է մեկ չծածկված թել՝

3—1—3—1—3—1—3

Ըյուղերի արանքում (երեսի կողմից) կտորից հինգ թել մնում է չծածկված մետաքսյա թելով, այդ արանքը ծածկվում է կարմիր թելով՝ աստառի կողմից:

Ծառի բնի մոտ երկրաչափական ձևերը — սոմբերը, արապեցիաները նույնպես ծածկվում են աստառի կողմից մետաքսյա թելով, իսկ երեսի կողմից մնում է բաց ճերմակ կտորը: Ծառի բունն էլ կամ երեսից է ծածկվում թելով, կամ աստառի կողմից:

Ծառն ասեղնագործելուց հետո, պետք է ասեղնագործել սոմբաձև շքր-ջանակը: Ռոմբի կողմերը սկսվում են սոմբի չորս անկյունագարդերից, բարձրանում են վեր կամ իջնում ցած թեք սանդուխտի ձևով: Այդտեղ էլ պահպանվում է 3—1—5 թելերի հաշիվը. ամբողջ շարքը 3—1—3 թելի հաշիվով է արվում, 5 թել է վերցվում միայն այն ժամանակ, երբ սկսվում է կտոր, կտուցը (տես նկ. 1):

Շրջանակ սոմբի ամեն մի կողմը սկսվում է մի անկյունից և թեք ասեղնագործվելով վերջանում մյուս անկյունում:

Այսպիսով ծառն իր ճյուղերով և սոմբի անկյունագարդերն ասեղնագործվում են տանձին, իսկ շրջանակ-սոմբի կողմերը՝ տանձին-տանձին, այդպես էլ հետևյալ ծառը, հետևյալ շրջանակը՝ մեղրարջիջների կարգով:

Ծառի ու շրջանակի միջի տարածությունը (գաշա) մնում է բաց, այդտեղ զարդարանքի թափանցիկ կտորը ոչ երեսի և ոչ էլ աստառի կողմից չի ծածկվում մետաքսյա թելով:

Թե ինչ զարդարուն կտորի մասունքներ են ՀՍՍՄ Գեո. Մատենա դարանի № 3611 ձևագրում պահվող և մեր քննություն ատարկա այդ բեկորները, չգիտենք: Այն հանգամանքը, որ ծառերի մոտիվները բոլոր դեպքում ունեցել են միևնույն ուղղությունը, ցույց է տալիս, որ մեզ հետա-



քրքրող զարգարուն կտորը գործ է անվել այնպիսի պարագաներում, երբ հարկավոր է եղել, որ բոլոր ծառերը երևան բնական դիրքով: Ուստի կարելի է ենթադրել, որ մենք այժմ գործ քաննենք միջնադարյան մի թանկարժեք վարագույրի, կամ ծածկոցի մնացորդների հետ: Իսկ կարելի է ասացուցել նաև այլապ ասեղնագործութեան տեխնիկայով, օրինակ, զարգանկարը մաքուր, կակիկ ասեղնագործված է թե երեսի և թե աստառի կողմից, որի շնորհիվ հնարավոր է եղել այն դիտել երկու կողմից էլ: Չարգանկարը երեսի կողմից մի նախշ է ներկայացնում, իսկ աստառի կողմից — զրա հակառակը—նեղատիվը, որն ինքն ըստ ինքյան նույն նախշի մի այլ վարիանս է հանդիսանում: Այդ աշխատանքն այնպիսի վարպետութեամբ է կատարված, որ վերարտադրութեան ժամանակ մենք դժվարանում էինք որոշել, թե ո՞րն է երեսը, և ո՞րը աստառը: Իսկ ինչպես հայտնի է, այն ասեղնագործութեանները, որոնք կատարվում են թափանցիկ կտորների վրա և գործ են անվում առանց աստառի, որպես վարագույր, ծածկոց, քող և այլն, կարվում են մեծ խնամքով և մաքուր են լինում նաև աստառի կողմից:

Վերջացնելով հայկական ասեղնագործութեան այս եզակի նշանակութուն ունեցող հին նմուշի նկարագրութեանը, պետք է ասել, որ թափանցիկ ճերմակ կտորի վրա կարմիր մետաքսյա թելով կատարված այս ասեղնագործութեանը շափազանց նուրբ է, գեղեցիկ, արտահայտիչ:

Ասեղնագործութեանը զարմացնում է իր զարգանկարի արվեստային կառուցվածքով, մեղրարջիջների պես դասավորվածութեամբ, բոլոր մասերի ներդաշնակ համաչափութեամբ, նուրբ գեղեցկութեամբ, թելերի խելացի, նույնիսկ խորամանկորեն կազմված թվարանական հաշվածքով:

Հասարակ հնագույն ժամանակներից շարակարգով հորինել — ասեղնագործել այնպիսի բարդ կառուցվածք ունեցող զարգարանք, ինչպիսին է մեր հին նմուշը, կարող էր կատարել միայն մեծ ճաշակ, հնարագիտութեան, գեղեցիկի բարձր զգացում, մեծ փորձ ու սեր ունեցող ժողովրդական ստեղծագործութեան մեծ վարպետը:



